ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«10» .....01..... 2017 թվականի № 01-Ակ/1

Ս. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԵՎ Ա. Ռ. ԴԱԴՈՒՆՑԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.2.1 կետի «թ» ենթակետը, Ս. Ս. Խաչատրյանի հետ 2013 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված N 15 աշխատանքային պայմանագրի 5.1. կետի «զ» ենթակետը, Ս. Ս. Խաչատրյանի անձնական դիմումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Սասուն Սաշայի Խաչատրյանին 2017 թվականի հունվարի 16-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծել նրա հետ 2013 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված N 15 աշխատանքային պայմանագիրը:

2. «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն ընկերության գլխավոր հաշվապահ Արա Ռադիոնի Դադունցին՝ մինչև վերոնշյալ թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից զբաղեցնելը:

3. «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Ռ. Դադունցին՝ ստեղծել հանձնաժողով և սահմանված կարգով կատարել ընկերությանը ամրակցված ակտիվների և պարտավորությունների գույքագրում:

4. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի կազմակերպման աշխատանքները

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ